

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ժր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու րիս մեկ ծրարով

Տարեկան . . 14 Ժր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Ժրար.

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշցման տողը

20 սանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Redaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւս

չեն տրուիր

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

Ամեն հայ, աշխարհի որ կողմը որ կը գտնուի, դէպի ազգային այդ մեծ հաստատութիւնը գուր. գուրանք մը կը տածէ. կը փա. փաքի ու է կերպով գտնէ փոքրիկ օգնութիւն մը հասցնել իր կողմէն այդ հաստատութեան մէջ ապաս. տանած հազարի մօտ որբ, անկ. հաւ և հիւանդ ազգայնոց. Այդ գուրգուրանքը ու այդ փափաքը ունի թէ՛ թրքասեր և թէ՛ ազգա. սէր հայը, թէ՛ պահպանողական հայը և թէ՛ յեղափոխականը.

Ընդհանուր հայ ազգին այս գագաթը ծանօթ ըլլալով, տասն. եակ տարիներ առաջ խորուած ու յղացուած է Ազգ. Հիւանդանոցին անունով սիկարի թուղթ մը հա. նելու գաղափարը. սա հաստատ. յայտով որ ամէն ծխող ազգային անխորի այդ թուղթը պիտի գոր. ծածէ, որով մի քիչ նպաստած կըլլայ այդ հաստատութեան, խոր. հելով թէ այդ քիչերը իրարու քով գալով մեծ գումար մը կը կազմեն.

Այս խիւացի գաղափարը յղա. նալուն ի վարձ կամ իբր նախա. փորձ՝ Ազգ. Հիւանդանոցին անու. նով սիկարի թուղթ հրապարակ հանելու արտօնութիւն տրուած էր Տիար Մ. Շիրինեանի, սա որոշ պայմանաւ թէ սպառած թուղթին իւրաքանչիւր տուփին համար Տ. Շիրինեան մէկ զր. վճարէ Հիւան. դանոցին. ինչպէս ամեն ոք գիտէ, այս պայմանաւ շարունակուեցաւ մինչև 1900 թուականը. և ծխող. ները ամէն օր իրենց աչքովը կը տեսնէին թուղթին իւրաքանչիւր պրակին մէջ տպուած 1894էն մին. չեւ 1899 տարիներու հաշուեցու. ցակը, որ տարեկան, միջին հա. շուով, 45,714 զրուշ շահ ցոյց կուտար Հիւանդանոցին.

Այս հասոյթը բազմապատկելու նպատակաւ անշուշտ, ազգային իշխանութիւնը որոշեց ուղղակի Հիւանդանոցին սեփականութիւն ընել սիկարի թուղթը, և գործա.ւորի վարձը ալ չը վճարելու հա. մար որբերը աշխատցնել, որով անհամեմատ կերպով թէ՛ աժան

ապրանք պիտի ըլլար և թէ ծխող ազգայինները տեսնելով թէ բոլոր հասոյթը Հիւանդանոցին կը մնայ, նախանձախնդիր պիտի ըլլային միայն այդ թուղթը գործածելու.

Այս վերջին կարգադրութիւնը ինչպէս ամէն հայ նոյնպէս և մենք սրտի մեծագոյն գոհունակութեամբ ողջունեցինք, և այն օրէն ի վեր Հիւանդանոցի թուղթին սպառումը գրեթէ ընդհանրացած է ամէն կողմ. և բնականապէս հասոյթին ալ տասնապատկուած ըլլալու հաս. տատ յոյս կը սնուցանէինք մեր մէջ. Բայց ցաւալի է ըսել թէ մեր զար. մանքը մեծ եղաւ երբ ուշադիր բարեկամ մը մեր ուշադրութեան ներկայացուց Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան հրատարակած ներկայ տարւոյ Յունուար և փե. տրըուար ամիսներու պաշտօնական հաշուեցոյցը. Հոն տեսանք թէ սիկարի թուղթին այս երկու ա. միսներու զուտ շահը եղած է մի. այն 2,775 զրուշ. Մինչդեռ առաջ, երբ Տ. Շիրինեան կը շահագործէր ու տուփին միայն մէկ զրուշ կը վճարէր Հիւանդանոցին, (1894էն մինչ 1899), միջին հաշուով Յուն. ուար և փետրուար ամիսներուն զուտ շահ տուած էր 6,004 զրուշ. այսինքն այժմու հասոյթին կրկնա. պատկէն աւելին.

Ինչպէս մենք, նոյնպէս ամբողջ հայ հասարակութիւնը մինչ կը սպասէր սիկարի թուղթի հասոյթը տասնապատկուած տեսնել, որով. հետեւ հիմակ թէ սպառումը շտա. ցած է և թէ պատրաստութեան ծախքը նուազած, այսօր ընդհա. կառակը կը տեսնուի Հոգաբար. ձութեան պաշտօնական հրատարա. կութեանց մէջ.

Այս տարօրինակութեան հան. դէպ չուզելով անտարբեր մնալ, Ազգ. Պատրիարքարանի ուշադրու. թիւնը պիտի հրաւիրենք, որ պար. տաւոր է կամ համոզիչ և զօրաւոր փաստերով մեր կաւկասեցի փորա. տել և կամ ընդունել թէ ահագին զեղծոյն կը գործուի Հիւանդանոցի պաշտօնավարութեանց մէջ.

Թուղթի գործին մօտէն տեղ. եակ և ծանօթութիւն ունեցող ազ. գային մը մեզ խոստացաւ այս առթիւ աւելի մանրամասն ուսում.

նասիրական յօդուած մը պատրաս. տել, զոր պիտի հրատարակենք մեր յաջորդ թիւով, որ ընթերցող. ներուն մտքին աւելի լոյս կրնայ սփռել.

Սակայն աւելորդ է խրատել թէ ծխող ազգայինք պէտք չէ որ կաս. կածի մը վրայ յենլով գաղթին Հիւանդանոցի թուղթը գործա. ծելէ, ալ ալ աւելի հաստատա. մտութեամբ յանձնարարելու են այդ թուղթը իրենց բարեկամներուն ալ, վստահ ըլլալով թէ, եթէ զեղ. ծում մը կայ ամէն ջանք ի գործ կը դրուի անոր առջեւ առնելու համար.

ԳՈՐԴՈՅԹ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՐ ԹՂԹԱԿԵՆ)

ՍՕՖԻԱ, 29 Ապրիլ

Ճիշդ չաբաթ մը առաջ էր որ Սոպրանիէն բացուեցաւ կարճա. ռօտ գահաճառով մը, որուն միակ նշանակելի կէտը սա էր թէ կա. ռավարութիւնը ժողովին նկատա. ռութեան պիտի ներկայացնէ երկ. րին տնտեսական վիճակին բար.ւոքման մասին մի քանի օրինա. քներ.

Արդէն ամենուս ծանօթ էին այն պատճառները որոնք կը պարտա.ւորէին վարչապետ Տօք. Տանէվը մզել Ս. Բեթերսպուրկ, Չարին մարաքաղաքը, հոն Ռուսիոյ կա. ռավարութեան ուղղակի կամ ան. ուղղակի պաշտպանութիւնը հայ. ցելու, և հոնկէ վիրադարձին ելեւ. մտական նախարար Տ. Ս. Սարա. ֆովի հետ ի փարիզ ուղեւորու. թիւնին և փարիզի դրամատան հետ կրկին անգամ ըլլալով բանակ. ցութեան ձեռնարկելին, ի մասին փոխառութեան մը որ կարծես Դամոկլէսի սուր մը դարձաւ պու. կար կառավարութեան գլխուն, չը ցորդ ըստ ածիբը կամ գըր. ուածները կը հաստատեն թէ Տօք. Տանէվի դահլիճը այս անգամ յա. ջողած է նախորդէն աւելի նպաս. տաւոր պայմաններով փոխառու. թիւն մը կնքել «Պանք տը Բարի է տէ Բէյ Պայ» դրամատան հետ.

Փոխառութեան գումարն է 100 միլիոն ֆր. 83 էմիսիօնով և 0/0 5 տոկոսով, առանց ծխախոտի մե. նաշնորհին երաշխաւորութեան. Խէեւ ճիշդ չը գիտցուիր թէ ին. չով երաշխաւորուած է այս փո. խառութիւնը, բայց կը կարծուի թէ կամ ծխախոտի պաւտիօրով և կամ ուրիշ եկամուտներով պիտի երաշխաւորուի առանց երկրին ա. զատ վաճառականութեան օրէնքը բռնաբարելու և կամ Պուլկարիոյ տնտեսական ազատ զարգացումը ուսնակոխ ընելու.

Ահա այս հանգամանքները և կացութիւնը ստիպեցին Սոպրա. նիէն իր արտակարգ նստաշրջա. նին հրաւիրելու, որուն գլխաւոր նպատակն է փոխառութիւնը վի. ճաբանութեան ենթարկել և եթէ յարմար դատուի՝ վաւերացնել.

Սոպրանիէն նախագահ ընտ. րուեցաւ ծերունին Տրական Յան. քով և փոխ-նախագահներ՝ Աւտօն Ֆրանկիա և Տ. Գ. Բօթով.

Մինչեւ որ գահաճառին պա. տասխանը քուէարկուի և երեսփո. խաններու ընտրութիւնները վա.ւերացուին բաւական ժամանակ պիտի տեսէ, հազիւ թէ կարելի պիտի ըլլայ ասկէ 3—4 շաբաթէն փոխառութեան վիճաբանութեան սկսիլ, որուն նպատակաւ լուծ. մանք կը սպասեն անձկանօք բոլորն ալ, վաճառականը, սեղանաւորը, արհեստաւորը, երկրագործը, մէկ խօսքով բոլոր Պուլկարները.

Ամսոյս 23ին և 24ին Պոլսոյ մէջ և ամբողջ Պուլկարիոյ և պուլկար համայնք եղած տեղերը մեծ հան. դիւաւորութեամբ կատարեցին Նո. րին Սրբութեան Պուլկարաց էկ. զարք իօսիֆ իօվչէվի, էկզարքա. կան գահը բարձրանալուն 25ամեայ յոբելեանը. Ամեն. իօվչէվ էկզարք ընտրուեցաւ 1877 Ապրիլ 23ին, իրենց Ս. Գէորգայ զօրավարի տօ. նին օրը, Ռուս-թրքական պատե. րազմը հրատարակուելէն ճիշդ տասնեակէկ օր յետոյ. Կրնայ երե.ւակայուել թէ պուլկար ազգը այդ թուականին, այդ օրերը, ինչ ճա. կատաղրային վիճակ մը կանցու. նէր. Յեղափոխութիւնը և կոտո. րածները, աքսորները և աղէտ. ները բովանդակ պուլկար ժողո.

վերջը ջլատած և ջախջախած էին բարոյապէս և նիւթապէս։ Ազգին յարաբերութիւնը հանգէպ թուրք կառավարութեան ամենափափուկ վիճակի մը մէջ կը գտնուէր։

Ահա այս տեսակ աննպաստ պարագայներու տակ յորեւորը կոչուեցաւ պուլկար ազգին հոգեւոր պետն ըլլալ։

Բայց, չնորհիւ իր հայրենասիրական ձգտումներուն և գիւտասփոփական տաղանդին կարող եղաւ օգտակար հանգիստնալ ազգին և եկեղեցւոյն և ամբողջ պուլկար ժողովրդին երախտագիտութեան առ ինքն գրաւել։

Մայրաքաղաքէ մասնաւոր պատուիրակութիւն մը Պոլիս զրկուեցաւ, իշխանին և կառավարութեան կողմանէ չնորհաւորելու էկ զարքը։

Մեր Պատրիարքը և Հռովմէական Հայոց Պատրիարքը անձամբ գացած չնորհաւորած են զինքը։

ԱՐՄԵՆԱԿ

ՅՐԱՆՍԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԵՐ ՆԿԱՏՄԱՐԸ

(Շաբ. 31 թիւին և վերջ)

Ասկէ դատ, ուրիշ քանի՞ քանի՞ առիթներու մէջ հրեայ ցեղը մեզ քնասակար չը հանդիսացաւ։ առաջին անգամ մեր զօրապետութիւնները միտող գրքոյկի հեղինակը հրեայ մը չէր։ Ասոնց վրայ դուք կրնաք աւելցնել հարիւրաւոր, հազարաւոր օրինակներ, առիթներ, դէպքեր որոց մէջ հրեայն—ինչպէս պարզ՝ բայց դերազանցօրէն խելօք կերպով կըսէ մեր ժողովուրդը—«մեր մուխը մարեց»։

—Ուրեմն ցաւալի է Բօլ տը Գառնեաքի եւ Տրիւմֆի նման մարդոց—ինչպէս եւ այլոց՝ թէպէտ նուազ ծանօթ—անկումը։

Բայց խնդրեմ ըսէք, եթէ նոյնիսկ Ֆրանսական Սենեակը միայն հայասէրներով լեցուի, կը կարծէք թէ մեր

վիճակը, շատ չէ՞, գոնէ՞ մազի չափ կը փոխուի։

—Երբէ՞ք։ Մեր վիճակը, մեր գրութիւնն ի՞նչ որ էր նոյնը պիտի մնայ։ Կը ինչէք անշուշտ այն անմոռանալի տարիները, սարսափելի ամիսներն, ուր արար աշխարհ մեր վրայ կը խօսէր, մեր զօրապետութիւնները կը պատմէր, ո՛ւր զանազան երկիրներու մէջ ժողովրդային մեծ ու պզտիկ միութիւններ, ժողովներ, հաւաքումներ անգլի կուսակալին որոց մէջ երբեմն արտաճում էր, մերթ հրկիզող եւ միշտ հայապատ թանաթութիւններ ու ճառեր կը կարգադրէին, կարտասանուէին, ո՛ւր քանի մը պետութիւններու պատերազմական նաւերը ծովերու վրայ, պատկանելի թուով, աստանդ կը վազվզէին, ո՛ւր մի քանի խօսարարներու մէջ մեր խնդիրը կատաղի հարցապնդումներու եւ վիճաբանութեանց առարկայ դարձաւ, ո՛ւր զիւստագիտական թղթակցութիւններ եւ նոթեր իրարու փոխանակեցին եւրոպայի մեծ ու պզտիկ պետութիւնները, ո՛ւր վերջապէս ամենայն ինչ մեզ ի նպաստ լինելու գոնէ արտաքին ձեւը, երեւոյթը կամ գոյնն ունէր։ Մենք այդ իրարանցումէն ի՞նչ չափեցանք։ — զէքո։ Ասոնք ի՞նչ հետեւանք ունեցան, — զէքո։

Ուրեմն մի անգամ ընդ միշտ մտքերնիս զննեք—անցեալ բոլոր եղելութիւններէն խրատուելով—թէ Ֆրանսայի չէ այլ ո՛ր ազգին որ կուզէք խօսարար լեցուած լինէին հայասէրներով, մեր վիճակին նկատմամբ բնաւ նշանակու թիւն չունի։ Որովհետեւ քրիստոնէական, եղբայրսիրական, մարդասիրական դարերն այսիւս աւաղ, անցեր են։ Այս օրուան տիրապետողները եւ ևս մեծ բառերն են։ ասոնցմէ դուրս ուրիշ բոլոր կամ ուրիշ բան մի փնտռէք։ Ֆրանսագին շատ լաւ կարտայայտէ այս միտքն իր ճամբէն ու իր համար, իսկ Աստուած ամենուն համար՝ առաժույթ։

Չէ՞ք տեսներ, եթէ մի կողմանէ Եւրոպայի—մանաւանդ Արեւմտեան Եւրոպայի մէջ—մի քանի յայտնի գրիչներն ու խորհողներն համաշխարհային եղբայրութիւն կը քարոզեն, աւելի

(*) Մենք բոլորովին այդ կարծիքէն չենք։ Դիւ. Սիւր.

քան վերացական փաստերու վրայ հիմնուելով, ուրիշ կողմէ համացեղականութեան ձգտումներն ու ծրագրերն են, ահագին՝ հսկայական քայլեր կառնեն, դրական փաստերու վրայ հիմնուած՝ նկատելի եւ նոյնիսկ չօչափելի արդիւնքներ տալով։ Իբրեւ պոպոյց, տեսէ՛ք համալատիւնականութեան, համաքրիստոնէականութեան, համալատութեան եւ նոյնիսկ—մի՛ խորհեաք—համախառնութեան, սիօնականութեան նկատման, անմիջական եւ հեռաւոր նպատակները։ Երբեք, կը փութանք ըսել, պատիւ կը բերեն այն գաղափարներու հիմնադիրներուն եւ վարիչներուն, որովհետեւ անոնք կատարեալ եւ հեռաւոր քաղաքագէտներու աստուծոն ունին։

Այս ձգտումներն երբ գոյութիւն ունին, ինչու կուզէք որ օտարն—անմիջական չափ մը չունեցող—օտարն—իրապէս եւ արդիւնաւոր կերպով մեզմով զբաղի։ Շատ հեռի չէ այն ժամանակները ամենամեծ քաղաքագէտներէն մին կրէր թէ ամբողջ Հայերը չի փութեր փոքրամեծ զինուորի մը ոսկորին հետ։ Լսած կը լինիք անշուշտ թէ վեհապետ մը փոխկրթի Հայերու դժբաղդութիւններուն վրայ, անմիջական մէկ միջոցով զրկած էր կամ նուրիւրած էր անոնց։ Բայց այդ միջոցէն մէկ սանդիւղ իսկ ստիւեալ եւ տկոր Հայերու ձեռքը չը հասաւ։

Ահ, խնդիրը բոլորովին եւ ծայրէ ծայր կը փոխուէր եթէ մեր խնդրոյն մէջ ու եւ շատ աղբիւր լինէր, եթէ մենք ունենայինք ոսկու, ազամանդի, արծաթի, երկաթի հանքեր, որոց շահագործումն արդիւնաւոր լինէր այսօր, եթէ մեր երկրին մէջ լինէին երկաթուղու, թրամուէի, նաւարկութեան ընկերութիւններ։ Եթէ մեր ցեղակիցներն ունենային՝ երկրին մէջ կամ դուրսը՝ մեծ պանդաներ, եթէ մեր հարուստներն, պանդաներն, ընկերութիւնները փող տուած լինէին մի քանի պետութեանց, եւ կամ եթէ օտարներն զրաւ ունենային մեր զանազան ընկերութիւններուն մէջ։ Եւ, այն ժամանակ, հաւատացէք, ամենափոքր աչքով թեւէն ակամ միջոցաւ ամենամեծ իսկ. կը հետաքրքրուէր մեզմով եւ գիտէ՞ք, մեր քիթն իսկ չէր արիւնէր։

Այսօրուան աշխարհ վարողը, քա-

ղաքականութեան եւ դիւանադիտութեան շիղդ, հոգին, մարմինը, արիւնը դրամն է, փողն է, որ կը ներկայանայ հազար եւ մէկ ձեռք տակ։ Մենք այն ձեւերէն եւ ոչ մէկն ունենալով, բնականաբար օտարին համար բնաւ հետաքրքրական չենք, ու չենք ալ կարող լինել։

—Ուրեմն եթէ Ֆրանսական կամ այսինչ ու այնինչ ազգի խօսարար լեցուած լինի նախօրոյն փաստներով թէ ընկերակարականներով, արմատականներով թէ հասարակապետականներով, կայսերականներով թէ թագաւորականներով, կաթոլիկներով թէ անաստուածներով, մեզ համար բոլորովին միեւնոյն բանն է, մեր վիճակը քայլ մը իսկ չի կրնար տոնել դէպի բարեկալութիւն։ Դժբալ մը քրիստոնեաներ՝ քրիստոնէական տեսակէտով, մի քանի մարդասէրներ՝ մարդասիրական տեսակէտով, մեծ ու պզտիկ ճառեր պիտի խօսին, առաջարկներ, բանաձեւեր պիտի ներկայացնեն։ Կետեանքը.— զէքո։

Որովհետեւ այդ բանախօսներու ետին կայ միևնույնութիւնն՝ այլապէս ասած կառավարութիւնն։ Իսկ կառավարութիւն մը մեզ համար քայլ մը առնելու համար, պէտք է որ շահ մը, նպատակ մը ունենայ։

—Ուրեմն։ Ուրեմն սպասելով որ աշխարհ փոխուի, պէտք է հետեւինք Ֆրանսական առաջին որ քիչ առաջ մէջ բերի։ «Մենք մեզ համար, իսկ Աստուած ամենուն համար»։ Եւ կամ ինչպէս ուրիշ Ֆրանսական առաջ մը կըսէ՝ «մենք մեզի օգնենք, Աստուած ալ մեզ կօզնէ»։

Այս ըսել է թէ այն որ ուրիշէն կը սպասէ իր փրկութիւնը, այն որ իր յոյսն ուրիշից վրայ կը դնէ յաջողութեւ համար, պարզապէս իր ժամանակը կը կորսնցնէ։

Բայց այս ըսել չէ թէ պէտք է մենք մեր բազուկները ծալենք եւ... աշխարհի բարեփոխութեան սպասենք։ Եւ մեր ամենուս պարտքն է, քանի որ միևնոյն զօրազոյց ցեղին կը պատկանինք, մեր ձեռքէն եկածն ընելու, խօսելու, գրելու, աղաչելու, շահագրգռելու, ո՛հ մանաւանդ շահագրգռելու օտաւը, գրացին, զօրաւորը, կարողը, անոնց ցոյց տալով, պատմելով, բացատրելով թէ ի՞նչ բանեւրու կարող է մեր ցեղը, թէ ի՞նչ

զէն զգացուած՝ Գիլբերտ զուխը ձեռք... Վարդապետին ձեռքը համբուրեց ու ըսաւ։

—Միզա՛յ, Հայր Սո՛ւրբ, գործերու մէջ մոռցած էի իմ հոգեւոր պարտականութիւնները կատարելու։ Երբեմն եկեղեցի չեմ գացած, աղօթքներս չեմ ըրած... բերնէս գէշ աղէկ խօսքեր հանած եմ։

—Ասոնք ուղղելի բաներ են, ընդհանեց վարդապետը։ Դուք խոստովանեցէ՛ք անանկ մեղքեր, որոնք հոգին կը սպաննեն։ Եկեղեցին, աղօթքը, ասոնք միշտ ձեր աչքին առաջն են։ Յայտնեցէ՛ք ա՛յն գաղտնիքներ, որոնք Աստուած ու իր պաշտօնեան պիտի գիտնան։

—Ուրիշ մեղքեր չունիմ, Հայր Սո՛ւրբ։

—Նայեցէ՛ք, Ռէն Զաքո՛, հոս Աստուած կայ։ Իմացածիս նայելով, այս գեղին մէջ Մէլիք անունով մարդ մը կը բնակի եղբի, որ բանտարկուած է... ճի՛շտ է այս։

—Այո՛, ճիշտ է։

—Իբրեւ ոճրագործ մը, անանկ չէ՞։

—Ո՛չ։

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (15)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԶԻՐ ԶԱՔՕ ԻՐ ԴԵՐԻՆ ՄԷՁ...

—Ասով չեմ ըսեր թէ հոգեւոր պարտականութիւններդ կատարած չէք, շարունակեց Վարդապետը գրէթէ հաստատ ու յարգական ձայնով մը։ միայն թէ մեր պաշտօնն է ամեն ատեն խօսիլ։ Տեսէ՛ք, երկու օր է որ տունիդ մէջ կը գտնուիմ եւ դուք այս երկու օրուան մէջ ամեն տեսակ պատիւներ ընծայելու չլլաղաք ինծի։ Բայց չցաւիք, երբ լսեմ թէ այս երկու օրուան մէջ մոռցած խորհելու թէ վարդապետ մը եկած է, որուն պէտք է բանախօսէք մեր սիրտը։ Միթէ՞ ասանկ չէ՞։

—Իրաւ է... ներողութիւն, Հայր Սո՛ւրբ, զողջած Գիլբերտ, որ գրեթէ

բոլորովին ջախջախուած էր, բոլորովին ինկած էր՝ բառին բովանդակ նշանակութեամբ։

—Ներողութիւն խնդրելու պէտքը չունիք, Ռէն Զաքո՛, ընդհանեց Վարդապետը։ Հոգ չէ՛, բաւական է որ դուք ձեր հոգեւոր հօրը խօսքերուն հետեւիլ խօստանաք, բաւական է որ ձեր այս մեծ պաշտօնին մէջ, մեծ մարդ ըլլալու կոչումնիդ չմոռնաք։ Հիմակ, դուք ձեր պարտականութեան համաձայն, խոստովանելիք ձեր մեղքերը, որ ես ալ պահպանիչ մը ըսեմ ու վաղը մեկնիմ տունէդ։ Ի հա՛րկէ, մարդ ենք, մարդկային բնութիւնն ունինք... ըսել կուզեմ թէ այս անցաւոր աշխարհքի մէջ մենք աչքերնիս մեղքերու վրայ բացած ենք... Այս տեղ Աստուծոյ տաճարն է։ Բացէ՛ք ձեր սիրտը... բացէ՛ք ձեր հոգին։

Գիլբերտ բոլոր մարմնովը սարսուց... ու իր լալիրը աչքերու մէջ արցունքները լեցուեցան արիւնի թանձր խաւի երեւոյթով։ Յետոյ Վարդապետին երեսը նայեցաւ... անոր հրեշտակային կերպարանքը գիտեց այնպիսի գերազանց արքայութեամբ, որ քիչ անգամ տեղի ունեցած էր այդ գազանա-

բարոյ մարդուն հոգիին մէջ եւ արտայայտուած էր անոր դիմագծերուն վրայ։ Նայեցա՛ւ, այո՛... բայց մէկէն ի մէկ չկրցաւ իր պատասխանը տալ։ չկրցաւ վճռապէս ըսել թէ պատրաստ էր ամեն բան խոստովանելու... ուրովհետեւ իր գաղաղի երեւակայութեան մէջ ահաւոր գաղաղիք մը պատկերուեցաւ այդ պահուն։

—Ի՞նչու չէք պատասխաներ, յարեց Վարդապետը։

—Պարտքս է, Հայր սո՛ւրբ, մերմեջեց Գիլբերտ։

—Լաւ ուրե՛մն, ինչու կը վարանիք... եթէ չէք ուզեր խոստովանիլ, բացարձակ կերպով յայտնեցէ՛ք, ես իմ պաշտօնս կատարեցի։ Դուք գիտէ՛ք ձեր ընելիքը։

Գիլբերտ ճիգ մը ըրաւ։ Բայց այդ ճիգը իր էութեան գերադոյն զղրուեմն էր որ թելադրեց զինքը ու,

—Պատրաստ եմ... միմեջեց խղզուած ձայնով մը։

Վարդապետը չուտով մը ծունկի չոքեցաւ, ձեռքերը վեր տարածեց ու այս հրէջ մարդուն վրայ գլուխ մը Աւետարան կարդաց։ Յետոյ Մեղայի խորհուրդը կատարեց։ Այդ խորհուր-

հարստութիւններ, ինչ չափու աղ-
բւերներ իր մէջ կը պարունակէ մեր
երկրորդ, թէ ինչ բաներ կարելի է
ընել վաճառականական, էնդիւ-
զրիական, արուեստական, պեղար-
ուեստական, եւն. եւն. տեսակետե-
րով մեր երկրին մէջ եւն. եւն. . . .

— Ահա այս խօսքերով մենք հան-
գըտացուցինք կամ աւելի ճիշդը՝ յու-
սահատեցինք այն կարգ մը հայերն
որոնք ընտրութեանց երկրորդ աստուծոն
գործակալութեան բերօն եկան ի-
րարու ետեւէ։ Եղբարք՝

«Մենք մեզ համար, իսկ Աստուած
ամենուն համար»։

Մեղիք Ս. Դաւիթ-Բեկ
Բարիք, 3 Մայիս

ՍՈՒՏ ԶԷ

ԱՌ Պ. ՎԱՐԴՈ

ՇՈՒՄԼԱ, 25 Ապրիլ

Ինչ որ ըսած ենք Պ. Տիգրան Աճէմ-
եանի, սուտ չէ. եթէ մոռցած էք ե-
ղբուրդները կը յիշեցնենք, եթէ ճանչ-
ցած էք մեզ նկատմամբ ձեր բռնած
ընթացքի սխալ ըլլալը կը ներքինը,
մի յուզուիք այդքան, մենք Պապի
չենք, կրնանք սխալիլ։

Կը յիշէք անշուշտ, մի քանի ամիս
առաջ Հ. Գրիգորեան ստորագրու-
թեամբ ձեզ զրկուած էր Կալացի Տէր
Ղեւոնդ քահանայ Փափագեանի մասին
գրուած մի խիստ կարեւոր յօդուած,
որը պատասխան մը կամ հերքում մը
չէր Ձեր թերթի մէջ *** ստորագրու-
թեամբ գրուած յօդուածի մը։ Կարեւոր
էր յօդուածը, որովհետեւ ազգայնա-
քահանայի մը մասին գրուած էր,
բայց զուրկ էր հրատարակելիք, կամ
չուզեցիք հրատարակել, առարկելով
թէ՝ «գրութիւնը երկար է»։ Պ. խըմ-
բագիր, թոյլ տուէք մեզ ըսել, որ
քիչ թէ չատ, մենք ալ խմբագրական
օրէնքներու վրայ գաղափար ունինք,
եւ համոզուած էինք ու համոզուած
ենք թէ՝ զուրկ եւս պէտք եղած գա-
ղափարն ունիք այդ օրէնքներու եւ
կանոններու վրայ, սակայն մեր յօդ-
ուածը չը հրատարակելով, ձեր ըրած
այդ առարկութեան զիմաց, զարմա-
ցած մնացինք, որովհետեւ այդ յօդ-
ուածը *** յօդուածէն շատ կարճ էր։

— Հապա՜։
— Իբրեւ մեղսակից մը։
— Ոչ, սուտ չա՛ն, այդ մեղսակցու-
թիւնը հիմնական էր։
— Ի հարկ է, եթէ ո՛չ կառավա-
րութիւնն ինչու համար պիտի ձեր-
բակալէր զինքը։
— Դուք որ Մէլիքին ամենէ՛ն սի-
րելի մարդն եղած էք, ինչպէ՛ս կը
պատմեն, երբէ՛ք տեղեկութիւն չու-
նի՞ք այդ մասին։
— Ունիմ, Հայր Սո՛ւրբ։
— Ինչպէ՛ս ունիք։
— Ըսել կուզեմ թէ իմացած եմ որ
Մէլիք մատ ունեցած է այդ գործին
մէջ եւ թէ ոճրագործը պահած է ա-
միսներով։
— Սոսկալի բա՛ն, . . . ինչ չա՛ն ունէր
Մէլիք այդ տեսակ ոճրագործութեան
մը մէջ։
— Ոճրագործը հասարակ մարդ մը
չէր, Մէլիքին հետ ուրիշ խելքի կը
ծառայէին, Հայր Սուրբ, ինչ գիտ-
նամ։
— Ինչ խելքի կը ծառայէին։
— Սա՛նկ զէնքեր պիտի բերէին . . .
խումբեր պիտի կազմէին . . . որ կա-
ռավարութեան զէմ կարենային գլուխ
վերցունել։

բայց եթէ երկար ալ ըլլար, կրնայիք
չարունակութեամբ հրատարակել,
քանի որ անիկա քննադատական յօդ-
ուած մըն էր, իսկ զուրկ փոխանակ
այդպէս ընելու, մեզ մէկ երկու չա-
բաթ սպասեցնելէ եւ կրկնակի դի-
մումներ ընել տալէ յետոյ, պատաս-
խանեցիք թէ չը պիտի կրնաք հրա-
տարակել, ասիկա սուր չի, կարգա-
ցէք ձեր թերթի . . . խմբագրութեան
պատասխանները։

Դուք ազատ էք կարծեմ, եթէ ան-
պատճառ չէիք ուզեր այդ յօդուածը
հրատարակել թող չը հրատարակէիք,
բայց յետոյ ինչո՞ւ այստեղի ձեր մէկ
խեղճուկրակ կուսակցի երկտողովը Հ.
Գրիգորեան ստորագրութեամբ յօդ-
ուածը նոյնութեամբ հրատարակելիք
եւ մեզ առիթ տուիք որ ըսենք թէ՝
Շ. . . ի խմբագրութիւնը միայն իր
կուսակիցներու կողմէն զրկուած յօդ-
ուածները կը հրատարակէ։

Պ. Վարդօ, եթէ ձեր թերթի սի-
նակները այստեղի մի քանի կարծեց-
եալ գաշնակցական լրճուկներու բա-
րեխօտութեամբ պիտի բռնաք մեր առ-
ջեւ, պակաս ըլլայ, մենք չենք ու-
զեր այդպիսի շնորհ եւ կարօտ չենք
ձեր շնորհին. մենք չենք ուզեր ու-
րիշի բերնով թռչուն բռնել եւ ոչ ալ
մեր յօդուածները հրատարակել տալու
համար կեղծաւորել, ստել, այս կամ
այն յարանուանութեան յարիւլ, այս
կամ այն թերթի ուղղութիւնը բռն-
ել, մենք ըսած ենք այս ամենը
Տիգրան Աճէմեանի, այն ատեն, երբ
հարցուած է մեզ թէ՝ ինչո՞ւ համար
չենք գրեր կամ աշխատակցի Շ. . . ին։
Մենք ունինք մեր սկզբունքները,
որոնք հիմնուած են գիտութեան եւ
ճշմարտութիւններու վրայ, մենք կը
գրենք միայն ճշմարտութիւնը պաշտ-
պանելու համար, եւ դուք տակաւ
պիտի ճանչնաք մեզ։

ԱՍԼԱՆ ՏՕՆԻԿԵԱՆ

Մէկ օրինակ ալ զրկուած է Շ. . . ին։
Նոյն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարիքի Հայոց Բարեգործական
Ընկերութեան վերջերս կազմա-
կերպած երեկոյթէն 3,000 Փրանք
հասոյթ գոյացեր է։

— Էյ . . . դուք ալ չէի՞ք ուզեր։
— Ամենեւին։ Թող որ անոնք չէին
յայտներ ինծի այդ տեսակ ապուշ բա-
ներ։
— Ինչպէս կըլլայ որ գիտէք։
— Գաղտնի կերպով ականջ կը գնէի
անոնց խօսածներուն։
— Ըսել է թէ ոճրագործը տեսած
էք։
— Հապա՜ . . . երկու ամիսի չափ
հոս մնաց։
— Ոճրագործին հետ աղջիկ մըն ա՛լ
կայ եղբր։
— Անմահ ու գեղեցիկ աղջիկ մը
կար։
— Բնակի՞ց բերած էր հետը։
— Ո՛վ գիտէ . . . իբրեւ թէ սպան-
նուած քուրտ պէկին տունէն փախու-
ցած էր. բայց խելքիս բանը չէր
այդ։
— Ձեր խելքն ինչ կրէ այդ մա-
սին։
— Աղէկ գիտեմ որ այդ աղջիկն
ալ մէկտեղ գացեր է քուրտը սպաննե-
լու։
— Ինչ որ է. աղջիկն ո՛ւր է հիմակ։
— Ուրիշ տեղ մը փախուցեր։
— Այս բոլորը աղէկ, Ռէս Զաքօ՛,

— Բաղէչի պապական Հայոց
ուսուցիչներուն ամսաթոշակները
քանի մը ամիսէ ի վեր Դոմինիկ-
եան կրօնաւորները կը վճարեն ե-
ղիր. այս պատճառաւ տեղւոյն
փոքրաթիւ Հայ կաթողիկ ժողո-
վորդը սկսած է լատինական ծէսի
յարիւլ. Այս հոսանքին առաջը
առնելու նպատակաւ Մշտյ Հայ
պապականաց առաջնորդ Ճնդոյ-
եան եպիսկոպոսը վարդապետ մը
զրկած է Բաղէչ հովուական պաշ-
տօնով։

— Կեսարիոյ բարեջան առաջ-
նորդ Տ. Տրդատ Եպսկ. Պալեանի
գէտ եւս Պատրիարքարանի և պոլ-
սական Հայ թերթերու ամբաստա-
նագրեր զրկուած ըլլալուն պատ-
ճառաւ, Ն. Սրբազնութիւնը յե-
տաձգած է իր Պօլիս գալու գի-
տաւորութիւնը և յայտարարած է
Կեսարիա մնալ մինչեւ որ այդ
ամբաստանութիւնները քննուին ու
արդար վճիռ մը տրուի։ Եւ ար-
դէն սկսած է Կեսարիայէ պաշտօ-
նական և անպաշտօն հերքմնագրե-
րու և Առաջնորդին նկատմամբ
լատինացականներու տարափ մը
տեղալ Պատրիարքարան։

— Ս. Փրկչի Ազգ. Հիւանդա-
նոցի մէջ հոյակապ հիւեղեցի մը
կառուցանելու համար Տ. Սիքայէլ
Թակոբեան յատակագիծ մը պատ-
րաստել տուած է, բոտ որում
1,500 լիրա ծախք կը նախատես-
ուի. եթէ ծախքը այս գումարէն
աւելի իսկ ըլլայ Տ. Թակոբեան ինք
պիտի վճարէ։

— Նանսիէ Էսք-Ուէսք գործա-
կալութեան կը գրեն թէ՝ բժշկա-
կան Հայ ուսանող մը, Ռուբէն
Սիսլեան, անցեալ տարի Փրան-
սացի վարժուհիի մը սիրա-
հարեով ամուսնացած ըլլալուն հա-
կառակ, վայրենութիւնը ունեցած
է վեցհարուածեանով ծանրապէս
վիրաւորելու իր կինը. որ 18 օր
յետոյ մեռած է։ Սիսլեան թէեւ

չնչեց վարդապետը կատարեալ պաղ-
արիւնութեամբ։ Շատ ուրախ եմ որ
յայտնեցիք, որովհետեւ այդ մարդն
անցեալներ մեր քահանաներէն հա-
ղորդութիւն ուզած էր, առարկելով
որ ինքը պարզապէս զոհ մըն է եւ թէ
ամենեւին լուր մը չունի քուրտի մը
այդ սպանման գործին մէջ։ Ուեր քա-
հանաները մերժած ըլլալով հաղորդու-
թիւն տալու, ինչ հրաման մը ուզած
էին։ Հիմակ որ դուք ճշմարիտ կերպով
կըխտատվանիք անոր մեղսակցութիւնը
ա՛լ խիղճս հանդարտ պիտի ըլլայ,
երբ մերժեմ Դիտէ՛ք, կրօնքի մը
հանդէպ ոճրագործը, անձնասպանն
ու մեղսակիցը կը գատապարտուի ին ան-
ներելի յանցանքով մը. հետեւաբար
անոնց չեն տրուիր ո՛չ հաղորդութիւն
եւ ո՛չ ալ կրօնական սրբութիւններ։
— Այդպէս է, միմիջեց Գալիլէ։
— Սակայն չըսիք ինծի թէ կառա-
վարներու մէջ կասկածեցաւ որ Մէլիք
այդ ոճիրին մեղսակիցն է, քանի որ
ձեռնէ զատ մարդ մը չէր խմա-
ցեր։

Դիւրը ցնցուեցաւ, գալարուեցաւ
իր էութեանը մէջ ու գլուխը խոնար-

փախած ու պահուած է ժամանակ
մը, բայց յետոյ օձիքը ձեռք տա-
լով դատաւարութեան ենթար-
կուած։

— Տիգրիսէ կը գրեն հետեւեալը.
«Ս. Էջմիածնում վեհ. կաթո-
ղիկոսի ննջարանի քանդուելու վե-
րաբերեալ լուրը ստուգուելով,
յայտնուեւ է, որ ոչ մի անխու-
սափելի վտանգի չէր կարող են-
թարկել Նորին Օծութիւնը, եթէ
անգամ գիշերած լինէր վեհարա-
նում, քուլ է եկել ննջարանի տակը
Մատթէոս Դաթողիկոսի ժամա-
նակ թաղ տուած մի սենեակ, որ
չէր կարող մնասել վեհարանի շի-
նութեանը, և չի էլ մնասել վե-
հափառը ոչ թէ Բիւրականում,
այլ Հռիփսիմէի վանքումն է գի-
շերել, չը կամենալով հեռանալ այդ
երեկոյ մեծ Սասիսի փառաւոր
տեսարանից, որ այդ երեկոյ ներ-
կայացնում էր բնութիւնը»։

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԴԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ԱՅՈՒ-
ԿԱԿԱՆ։ Այս երգարանը Բ. անգամ
տպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեքիտուած է, եւ հակառակ գնոյն
աժանութեանը կը պարունակէ աղ-
գային հին եւ նոր գրքից բոլոր եր-
գերը։ Գին 1 Ֆր.

ՆԵՏԱ ԿԱՄ ՄՐՄՈՒՍ ՊԱՍՄԱՄԸ,
Պուլկարիոյ ազատութենէն առաջ
Պուլկար ժողովուրդին Թուրքերէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ։ Շատ հե-
տաքրքրական։

Գին 50 ԱՆԼԹ.

ՀԱՅՐԵՆԻԿԻ ԶՈՂՅԵՐ, Պատկեր մը
Ճաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան։
Զնչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար
պէտք է գրմել Իրաւունքի խմբագրու-
թեան, բօսթի ծախքը 10ական
սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, եթէ ուրիշ
գիւրութիւններ պատկեր, կընդունուի
նամակագրով 10 Ս/Օ զեղչով։

հեցուց՝ կայծակէ մը զարնուած գա-
ղանի մը պէս։
— Ի՛նչ . . . ես յայտնեցի ամեն բան,
թոթովեց Գալիլէ՛ գրքից լրբօրէն ու
ամօթալից ձայնով մը։
— Դուք, բացառանջեց վարդապե-
տը։
— Այո՛, ե՛ս։
— Կառավարութեան յայտնեցիք։
— Այո՛։
— Ինչ պատճառաւ։
— Պատճառն այն է որ Մէլիք իր
ընթացքով տէրութեան զէմ կը գնէր
եւ կուզէր որ բոլոր գեղերու մէջ զէն-
քեր մտնէին։
— Ա՛ . . . սոսկալի բան է այդ, ինչ-
պէ՛ս կրնար։
— Ի՛նչ գիտնամ . . . այնպէ՛ս բրաւ
որ տուրքեր հաւաքելու եկող Զապ-
թիաները կը վախճային բերանին
բանալու։ Սիթէ՛ մեզ կը վայելէ,
Հայր Սուրբ, կառավարութեան մը
հետ ասանկ վարուել. նայեցէ՛ք, իմ
օրովս ինչու այդպէս չէ . . .

(Շարունակելի)

ՏԵՂԵԹԼԻ ՖԵԼԱՔԵԹ

30-40 պիս քիշի քեյֆիյաք

Ամերիկա գրթաւորնա մէնսուպ ատտ օլընան Անթիլ ատալարըն- տան Մարթինիք ատաւորնա շիտ տէթիլի վերգէլէր վուզուի իւէ Սէն Բիէր շէհրինէ եագըն պուր- նան եանան տաղ (հրաբուղի) նա- կէհան աչըլուպ, ալէֆ վէ լավա բիւսկիւրմիւզ վէ 50 միլ մէսաֆէ. տէ էթրաֆը՝ ազ միւտտէթ զար- ֆընտա՝ լավա սէլլէրի իւէ տօլ տուրմըլ տըր:

Էն եագըն պուրնան Սէն Բիէր շէհրի պիւթիւն պիւթիւնէ ալէֆ- լէր իշէրիսինտէ գալուպ. 23,000 էհալիսինտէն եալընըլ 33 քիշի սաղ գալմըլ տըր: Շէհրին իլիմա- նընտա պուրնան 15 ատէտ պիւ- թիւն վարօրլար վէ կէմիլէր թու- թուշմուշ վէ իշէրիսինտէ պուր- նան 600 թայֆէլէրտէն քիմսէ գուրթուլմամըլ տըր. զիրա եա- նար տաղտան ֆըրլանան աթէշի թաշլար սահիլտէն 10 միլ տոհա իշէրի տէնիլէ տօլու կիպի եաղար ըմըլար: Շէհրին բըգտըմը իւզէ- րինտէ ինսան լաշէլէրի իւէ տօլ- մուշ օլուպ, էրագտան հիշ պիր վարօր օ ճիվարլարա եանաշմայա ճէսարէթ իտէմէյօր. իքի վարօր Սէն Բիէր շէհրինէ եագըն կէլմէք թէհրիւպէսինտէ պուրնտըլարը հասէպի իւէ՝ ֆըրլանան աթէշի թաշլար տօլու կիպի եաղուպ, մէզըիւր վարօրլարը տախի թու- թուշտուրմուշ վէ իշէրտէ պուր- նան թայֆէլէր տախի թէլէֆ օլ- մուշլար տըր:

Շէհրի աթէշ, գըղըրճըմ վէ եանար քիւլ իշէրիսինտէ մահիթ պուրնուպ, կէօք գըրմըլըլ աթէշ րէնկի վէ տէնիլ գայնար պիր հալ քէսպ իթմիշլէր վէ նիհայէթ տէհշէթմիլ պիր մէնգարէ վագը օլմուշ տըր: Գաշմագ իթմէլէրիւր եա լավա սէլլէրիսինտէ մէնն վէ եա տիւմանտան պօղուլմուշլար տըր:

Բօտալմ նամ վարօր Սանթա- լուշիայա եթիշէպիլմիշ իտէտէ, թայֆէլէրտէն 15 թէլէֆ օլմուշ վէ 20սի աղըրճա եարէլէնմիշլէր, գարտանը իտէ ագլընը գաշըրմըլ տըր:

Նիհայէթ մէզըիւր ատտ իլէ մուլապէրաթ քէսիլմիշ օլուպ, ա- տանըն տիկէր ճիհէթլէրիսինտէ պու- ընան պիւլլէրճէ էհալի պու կիւնէ գատար թէհիլէթտէ տիրլէր, զիրա էլան մէզըիւր եանար տաղ թաշ լար վէ լավա ֆըշկըրմագտա ը- մըլ:

Սէն Բիէր շէհրինէ եագըն պու- ընան պաղը քէօլլէր տախի էհա- լիսի իլէ եանուպ քիւլ օլմուշ օլ- տըղընտան, Սէն Թօմաս ատա- սընտան Մայիս 9տա վէրիլէն պիր թէլէկրաֆ թէլէֆիաթըն մըզտարը 40,000 քիշիլէ պալիզ օլաճաղընը պիւտիլմիշ տիր:

— Մարթինիք ատաւը Ֆրանսա բիւսթէմէքեաթը տըր: Ֆագաթ

մէզըիւր Անթիլ ատալարընտա ին- կիլիզ միւսթէմէքեաթընտան պու- ընան Սէն Վէնսէն ատաւորնա տախի պուրնան եանար տաղտան աթէշ զուհուր իթմիշ վէ լավա տաղըն էթէլիսինտէ քէօլլէրի պստըրը վէ 4) քիշի գատար թէլէֆ իթմիլի սօն հափաղիսաթ տան աշլաշըրմըլ տըր:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻԻԲԻՅԻԱ

Ասաքիր վէ գապիթտըն խրիս- տիան խանէլէրինէ կիրմէլէրի պա իրատէ մէնն օլընմըլ օլտըղը կի- պի, պու տէֆա եէնի պիր իրատէ իլէ միւլքիլէ իսլամ մէմուլարընըն տախի խրիստիան խանէլէրինէ կիտուպ կէլմէլէրի գաթիլէն մէնն օլընմըլ օլտըղը Սթանպուլտան թա- նա պիւտիլմիշ տիր:

— Սօն հափաղիսաթ կէօրէ Տէպրէտէ իսլամ Արնապուլարա ա- քէր վէրմէք էմիրնէ գարշը կէլէ- րէք, պիր տիւշման Ալպանիւլա հիւճուլ իթմէսինտէ պիւթիւն Ար- նապուլար վաթանլարընը մուհա- ֆաղա իթմէք վաղիֆէսինի ի- ֆայա հաղըր պուրնտըլարընը պէյան իթմիշլէր տիր:

Հիւքիւմէթ մէմուլարընտան Սոմի պէյին գաթիլընտան վէ իս- թիլալ գալտըրմալարընտան տօլա- յը Ֆիլիթաթօտա մահպուս պու- ընան պիր շօք Արնապուլարը պաշգա թարաֆա նագլ իթմէք էմիրնէ էհալի գարշը կէլէնէկիւնի թէհիլտէն հիւքիւմէթէ պիւտի- րիլմիշ օլտըղը սէպէպլէ, Եանեա- տան պիր ալայ աքէր Ֆիլիթաթօ- սա կէօնտէրիլմիշ տիր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Նայի Ֆրայէ Բրէսն Սօֆիա- տան ալտըր մալիւմաթա պիւնտէն, կէօնա՝ Ռուսիա վէ Պուլկարիա պէյինտէ մուգարրէր օլան պիր մուգապլէ իւզրէ, Բուսիա Պուլ- կար օրտուսընըն մուամէլաթը հարպիլէսինի վէ թալիմաթը տա- քէրիլէսինի նէպարէթ իտէնէկիւն- տէն, Պուլկարիանըն հարպիլէ պիւտէսի 24 միլիօնա եիւքսէլէ- ճէք իմիշ:

— Ֆէլաթմէթի Բրէսն Ֆէրտի- նանտ հաղրէթլէրի Սօպրանիէի քիւշաթը իշիւն իրատ իթմիշ օլ- տըղը նուլթընտա, Թիւրքիա իլէ Պուլկարիանըն տօսթըրգ միւնսէ- պաթընտան պահա իթմէմիշ իտի, Պու խուսուս իշիւն Եըլտըղտա պիր էնտիշէ հասըլ օլմուշ: Սօ- ֆիատաքի օսմալը գօմիսէրի Սթանպուլտան ալտըղը թալիմաթ իւզրէ, Մ. Տանէվ վէ պիլ միւրա- ճաթ՝ նուլթտա՝ Թիւրքիանըն միւնսէպաթը տօսթանէսինտէն պահա իտիլմէսինի թէքլիֆ իթ- մէսի իւզրէրինէ Մ. Տանէվ գօմի- սէրէ վատ իթմիշ իտէտէ, Բրէսն հաղրէթլէրինէ նուլթըն էվլէլ-

տէն գալէմէ ալընան միւսթէտտէ- սինտէն Թիւրքիա իշիւն եաղըրմըլ օլան իպարէի քէնտի էլի իլէ սիւ- միշ օլտըղը Սթանպուլտա պիլէ սէօլլէնմէքտէ իմիշ:

— Ամն. Էկզարքըր թէպրիգ ի- շիւն Պուլկարիա տան Սթանպուլ- իղամ օլընտէ հէլէթի մուրախտսէ ազալարընա Սուլթան նիշանլար վէրմիշ տիր: Պուլկարիա տօլալը վէլէրնա Բօշրա պիր պէնտ եա- զուպ, մէզըիւր հէլէթին Սուլ- թանտան նիշանլար գապուլ իթ- մէսինի իսթիհայա ալմըլ վէ պիր գաշ կաղէթալա՝ քէգա իրաշնէքա՝ գարշը Սուլթանըն տապա աշմա- սընը զիքը իթմիշ տիր: Հաղը- գաթ էկէր ալէլիսինտէ էօլլէ պիր տալա տախի աշըրմըլ օլտա, պիլ մէմուլիլէ իհզարնամէի գապուլ իտուպ, Սուլթանա թապի (՝) աատ օլընան շու Պուլկարիանըն մահքէմէլէրինտէ՝ Էրմէնիլէրին ումուլ գըրկընլարընա՝ Սուլթան Համիտին մէսուլիլէթինի է՝ գալի տէվլէթլէրլէ ըսպաթ վէ թէպէլիւն իթմէլէ հաղըրըլ:

Ձ Ի Ն

Սրաւտարտըն Թիւն-Յինտէն ալտըր մալիւմաթ իւզրէ, Շիլի վիլայէթինտէ ըսեան արթմագտա օլուպ, աւըլար կաթիլիլ քիլիսէ- լէրի վէ միսթօնէրլէր իւզրէրինէ հիւ- ճիւլ իթմիշլէր. ալէրին մըզտարը 40,000է պալիզ իմիշ:

ՍՕՆ ԹԵԼԷԿՐԱՖԻԱՐ

ԲԱՐԻՉ, 11 Մայիս

Յօռ տը Ֆրանստան ալընան մալիւմաթ իւզրէ, Սէն Բիէրտէ թէլէֆ օլանլարըն մըզտարը 30,000 տիր: Սիւշէ քուլագէօրին գօ- մանտանը լաշէլէր իլէ եէր էօր- թիւմիւշ օլտըղընը պիւտիլտի: 5,000 քիշի Յօր տը Ֆրանսա եէ- թիշուպ նաֆագա իսթէյօրլար: Սթէլէթ ուճ տէրէնտէ տիր: Սէն Վիլնսէն ատաւորնա եանար տաղ էլան աթէշ վէ լավա բիւս- կիւրմէքտէ տիր:

Էնգալար վէ նագըտ ագճէ իանէ կէօթիւրմէք իշիւն պիր վարօր եարըն Եէնի Օլլէտնտան Յօր տը Ֆրանսա կիտէնէք տիր:

Վաշիկիթօնըն մէճիսի Ալանը Մարթինիք ֆէլագէթլագտէլէրինէ իանէթէն 100,000 տօլար թախ- սիս իթմի:

Բարիտէ պիր իանէ գօմիսինը թէլէթիլ օլընտը:

ԲԱՐԻՉ, 11 Մայիս

Թանըն եաղտըղընա պիւնտէն, Սէն Բիէր շէհրինտէն մաատա Մարթինիք ատաւորնա տիկէր իւշ մահէլէր լավատան խարապ օլ- մուշլար:

ՀՕՆԿ-ԲՕՆԿ (2իւն), 11 Մայիս

Գուանի վիլայէթինտէ ըսեան էքսիլմէքտէ տիր: Պիր շօք միւ- սատէմէլէրտէ աւըլար մաղուպ օլ- մուշլար տըր:

ԲԱՐԻՉ, 11 Մայիս

Իմբէրաթօր Վիլհէլմ պիր թէ-

լէկրաֆլէ Մ. Լուպէէ Սէն Բիէր ֆէլագէթլինտէն տօլալը թէհիւ- ֆինի պէյան իթմի վէ 10,000 մարդ իանէ Եօլլատը: Մ. Լուպէ պա թէլէկրաֆ պէյանը թէլէքքիւր իթմի:

ԹԻԻԻԸՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 1 Մայիս
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալսոն իւպ. 49-53 հքթ. 7. —/ 8. —	
Արապա իւպ. 48-58 հքթ. 8. —/ 10. 40	
ԱՐԲԱ	
Վալսոն 100 քիւլ 10. 60/ 10. 80	
Արապա 35-45 իւպ. հքթ. 7. —/ 7. 70	
ԵՆԻՍԻՅԱ	
Վալսոն 100 քիւլ 13. —/ 13. 20	
ՅԱՍՈՒԼԻԻԱ 100 քիւլ 10. —/ 18. —	
ՉԱՎՏԱՐ	7. 80/ 8. —
ՄԻՍԻՐ	
Արապա իւպ. 54-58 հքթ. 7. 30/ 8. —	
Վալսոն իւպ. 100 քիւլ 9. 80/ 10. —	
ՏԱՐԸ	8. 20/ 8. 40
Կիւնաէ 15-20 արապա կէլմէք- տէ տիր. վալսոն 2-3:	
Վալսոն մուամէլէսի ալթուս ֆը- րանքլէ, արապա կիւմիլլէ, նարօ- լէտն 22-40 հիսապը իլէ:	

ԲԱՄՈՒՐ

Վարնա մաղադարնտա իւլիք սա- թըլարը:	
Ինկիլիզ իւլիկի Ն. 8-14 10. —	
» » Ն. 18-24 12. —	
Եէրլի իւլիք Ն. 8-14 9. 40	
Աթըրմըլ բամուք հօղա 2. —	
Բամպուկ ֆիլաթարը Եիւքսէլմէք- տէ տիր:	

ՍԱՐԱՅԻԹԷ

Նարոլէտն 22-40 ֆրանք	
Օսմ. լիւրաւ 22-90 ալթուս ֆրանք	

ՊԱԳԱՒԻԹԷ

Վարնա բիւսադարնտա պագալիլէ մալէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ- թուս ֆրանք իլէ:	
ԳԱՂՎԷ	1. 50/ 1. 70
Շէֆէր Նէմցէ	51
» (Բէսմէ) սանտըգ	27. 40
Բիւրինճ ճարոն չուվալը եօգ	—
» Ֆիլիպէ »	32. —
» Ինկիլիզ »	25. 26
» Բիգօն »	45. —
ԿԱՉ Սանտըղը	6. 70
Չէթիւն ԵԱՂԸ քիւլ —. 85/ —. 90	
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻԻՄ	—. 40

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Բաղէլ գաւառի Յորկոնք գիւղէն Պաղտասար անուս աղգայինը 6-7 տարի ի վեր անյայտացած ըլլալով, իր աղագաններէն կը փնտռուի: Յիշ- հալը 35 տարիկան, միջհասակ, թխաղէմ եւ սուաներ անձ մըն է. իր հասցէն գիտցող աղգայինը թող հաճին խմբագրութեան իմացնել, որպէս զի մենք ալ անոր ընտանիքին հաղոր- դենք:

ՈՒՇԱՐՈՒԹԻԻՆ



Եթէ կուզէք հագնել կօ- շիկներ որոնք իրենց վրայ միացունեն ձեւի եւ գիմաց- կունութեան կատարելու- թիւն եւ մանաւանդ գինի չափաւորութիւն, առանց վարանելու գիւնցէք Ս. Խորասանեանի. Մու- սալա, Տօքթ. Պատանովիչի տանը գիմաց:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна